AntiFake.am

ՀՀ, ք. Երևան-0019, Բաղրամյան փ. 1/27
Էլ. փոստ՝ antifakeam@gmail.com
Հեռ.՝ (+374 91) 57-27-18

№ 241-20

«27» օգոստոսի 2020 թ.

**Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանին**
(Հասցե՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 5,
էլ. փոստ՝ vdzor@mta.gov.am,
sonamargaryan@mail.ru
Հեռ.՝ (0281) 2-25-22)

**«Անտիֆեյք.ամ» կայքի գլխավոր խմբագիր**
**Աստղիկ Մաթևոսյանից**

**Տեղեկություն ստանալու հարցում**

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ և 42-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալի մասին.

1. Ընդհանուր որքա՞ն պարգևավճար են ստացել Վայոց ձորի մարզպետարանի աշխատակիցները 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում (տրամադրել 2020թ. առաջին կիսամյակի համար պարգևավճարի ընդհանուր չափը, ինչպես նաև ամսական պարգևատրումների ընդհանուր չափը):
2. 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Վայոց ձորի մարզպետը քանի՞ անգամ և որքա՞ն է պարգևատրվել (տրամադրել 2020թ. առաջին կիսամյակի համար պարգևավճարի ընդհանուր չափը, ինչպես նաև ամսական պարգևատրումների ընդհանուր չափը առանձին-առանձին):



Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ Ն...
Մուտքի թիվ 6261
28 08 2020

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու սույն հարցումը ստանալուն պես իրազեկել այդ մասին, ինչպես նաև հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Խնդրում եմ հարցման պատասխանն ուղարկել և՛ նշված էլեկտրոնային փոստի հասցեով, և՛ թղթային տարբերակով՝ նշված հասցեով:

**Կանխավ շնորհակալ եմ՝**

**«Անտիֆեյք.ամ» գլխավոր խմբագիր՝** **Ա. Մաթևոսյանից**

«27 օգոստոսի 2020 թ.